ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ N 2

«ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-01/19» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Արմավիր

22.01.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան
Անդամներ՝ Պ. Տերտերյան, Ռ. Ադամյան,
Մրցույթի համակարգող՝ Ա. Թաշչյան:

1. **Հայտերի բացման և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

1.1 Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված:

Հ/Բ N	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին
1	Բենզին ռեգուլյար	264 000 (երկու հարյուր վաթսունչորս հազար)
2	Դիզելային վառելիք, ամառային	23 717 140 (քսաներեք միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար մեկ հարյուր քառասուն)

1.2 Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

N	Մասնակցի անունը	Հասցեն և կապի միջոցները	Հայտ ներկայացնելու ամսաթիվ, ժամ
1	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	Ք. Երևան, Ե. Կողբացի 30 Հեռ. 010-53-42-33 Էլ. փոստ flashltdtender@gmail.com	2019 թվականի հունվարի 21-ին Ժամը 14:26
2	<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ	Ք. Երևան, Տպագրիչների 8 Հեռ. 010-52-67-51 Էլ. փոստ maxoil.llc@mail.ru	2019 թվականի հունվարի 22-ին Ժամը 10:59

Հանձնաժողովի նախագահը և անդամները գնահատեցին ծրարների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ հայտերը ներկայացվել են փակ սոսնձված ծրարով, ծրարի վրա հայտը կազմելու լեզվով կատարված են <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> գրառումը, ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինչպես նաև պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն):

Հանձնաժողովը որոշեց բացել ներկայացված հայտերը: Հայտերը բացվել են 2019 թվականի հունվարի 22-ին, ժամը 11:00-ին, քաղաք Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

2. **Ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության մասին**

2.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Ֆլեշ>> ՍՊԸ-ի և <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարներում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-01/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

3. Գնային առաջարկների մասին

3.1 Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, <<Ֆլեշ>> ՍՊԸ-ի և <<Մաքս Օիլ>> ՍՊԸ հայտով ներկայացված գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

<<ՖԼԵՇ>> ՍՊԸ				
Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Բենզին ռեգուլյար	202 500 Երկու հարյուր երկու հազար հինգ հարյուր	40 500 քառասուն հազար հինգ հարյուր	243 000 Երկու հարյուր քառասուներեք հազար
2	Դիզելային վառելիք, ամառային	18 474 938,33 տասնութ միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր երեսունութ ամբողջ երեսուներեք	3 695 061,67 երեք միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար վաթսունմեկ ամբողջ վաթսունյոթ	22 170 370 Քսաներկու միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր յոթանասուն

<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ				
Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Բենզին ռեգուլյար	200 000 Երկու հարյուր հազար	40 000 քառասուն հազար	240 000 Երկու հարյուր քառասուն հազար
2	Դիզելային վառելիք, ամառային	18 260 479,17 տասնութ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար չորս հարյուր յոթանասունինը ամբողջ տասնյոթ	3 652 095,83 երեք միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար իննսունհինգ ամբողջ ութսուներեք	21 912 575 Քսանմեկ միլիոն ինը հարյուր տասներկու հազար հինգ հարյուր յոթանասունհինգ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<Ֆլեշ>> ՍՊԸ-ի և <<Մաքս Օիլ>> ՍՊԸ հայտերով ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ առաջարկված գների նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

3.2 Հանձնաժողովը հիմք ընդունելով մասնակիցների ներկայացված գնային առաջարկները որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Մաքս Օիլ>> ՍՊԸ-ին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, իսկ <<Ֆլեշ>> ՍՊԸ-ին հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակից:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

4. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և Կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկատվության մասին

4.1 Հանձնաժողովի քարտուղարը էլ. փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով

նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և էլ. փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում «ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-01/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

5. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը որոշելու մասին**

5.1 Հանձնաժողովի քարտուղարն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին, քաղաք Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ _____ Ա. Հարությունյան
Անդամներ՝ _____ Պ. Տերտերյան
_____ Ռ. Ադամյան

Մրցույթի
համակարգող _____ Ա. Թաշչյան